ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2173-Հ/2 25 11 2022 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 315-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2010 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի մասին» N 315-Ա հրամանի հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

1.1.Արտասահմանյան պատվիրակությունների, հյուրերի, մշակույթի գործիչների ընդունելություն՝ 1) սննդի հետ կապված ծախս (օրական) 2) սուրճի ընդմիջման հետ կապված ծախս 3) պաշտոնական ճաշի հետ կապված ծախս 4) հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N 1036-Ն որոշմամբ հաստատված չափերի
1.2. Հայաստանյան պատվիրակությունների, մշակույթի գործիչների, արվեստագետների, ստեղծագործողների մասնակցություն արտասահմանյան միջոցառումներին՝ 1) օրապահիկ կամ սննդի հետ կապված ծախս 2) գիշերավարձ կամ հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված չափերի *(սննդի հետ կապված ծախսերի և հյուրանոցային ծախսերի համար սահմանվող չափերն ընդունվում են օրապահիկի և գիշերավարձի համար սահմանված ծախսերի չափերին*

	հավասար)
1.3. Պատվիրակությունների, մշակույթի գործիչների, արվեստագետների, ստեղծագործողների մասնակցություն հայաստանյան միջոցառումներին՝ 1) օրապահիկ կամ սննդի հետ կապված ծախս 2) գիշերավարձ կամ հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված չափերի *(սննդի հետ կապված ծախսերի և հյուրանոցային ծախսերի համար սահմանվող չափերն ընդունվում են օրապահիկի և գիշերավարձի համար սահմանված ծախսերի չափերին հավասար)*

»:

2. Սահմանել, որ մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը գործողության մեջ գտնվող պայմանագրերի համար օրապահիկը կդիտարկվի որպես սննդի ծախս (և հակառակը), իսկ գիշերավարձը՝ որպես հյուրանոցային ծախս (և հակառակը):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211